

ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝

06.07.2022 թ. կայացած նիստի թիվ 11 արձանագրություն

Օրակարգ

1. ԵԼՀ ֆակուլտետի երկու ամբիոնների՝ /գերմանական և ֆրանսիական բանասիրության/ վարիչների պաշտոնների մրցութային ընտրություն :

2. Ընթացիկ հարցեր :

Գիտխորհրդի 36 անդամներից ներկա էին 30-ը: ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը ողջունեց ներկաներին և անցավ օրակարգի առաջին հարցին: Նախ՝ ներկայացրեց ֆրանսիական ամբիոնի վարիչի պաշտոնակատար Բ.Գ.Թ., դոցենտ Գ.Սարգսյանին: Նա նշեց, որ իր ղեկավարման մի քանի ամիսների ընթացքում Գ.Սարգսյանը բարձր պրոֆեսիոնալիզմ է ցուցաբերել: Նրան շատ կարճ ժամանակում հաջողվել է մի քանի համագործակցության պայմանագրեր կնքել մի քանի ֆրանսիական համալսարանների հետ՝ իրականացնելով կրկնակի դիպլոմի գաղափարը: Դեկանը հավելեց նաև, որ ուրախ է, որ իր ընտրության մեջ չի սխալվել, քանի որ Գ.Սարգսյանն ամբողջովին իրականացրել է իր սպասումները: Նշվեց նաև, որ նա երկար տարիներ իր հաստատուն տեղն ու դերն է ունեցել ԵԼՀ ֆակուլտետի ֆրանսիական բանասիրության ամբիոնում: Հավելվեց, որ կարճ ժամանակահատվածում ամբիոնում բավականին մեծ բարեփոխումներ են կատարվել: Ֆրանսիական բանասիրության ամբիոնում պահպանվում է բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը: Մ.գ.դ., պրոֆեսոր Ի.Կարապետյանը նշեց, որ հաճելիորեն զարմացած է ներկայացված ծրագրից և հույս հայտնեց, որ ծրագրի մեջ տեղ գտած նախաձեռնությունները և ռազմավարական կետերը կիրականացվեն: Թիվ 1 անգլերենի ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., պրոֆեսոր Մ.Ապրեսյանը նշեց, որ ինքն էլ իր գործընկերների նման տպավորված է ներկայացված հզոր ծրագրով, ինչը, անկասկած, կնպաստի ամբիոնի զարգացմանը: Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Հ.Բաղդասարյանը նշեց, որ իրենց ամբիոնները սերտորեն համագործակցել են, և ներկայացված ծրագիրն իր համար նորություն չէ, ավելին՝ նա նշեց, որ ծրագրերի վրա ներդրած ջանքերին ինքն ականատես է եղել ամենօրյա աշխատանքում: Նշվեց նաև, որ Գ.Սարգսյանը ոչ միայն իր գործի նվիրյալն է, այլ նաև ֆրանսերեն լեզվի և

մշակույթի նվիրյալ: Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ս.Գասպարյանը նշեց, որ տպավորիչ էր ներկայացված ծրագիրը և ընդդրկուն: Նա հավելեց, որ նմանօրինակ աշխատանքը պետք է նպաստի ուսանողների գիտելիքների ծավալի բարձրացմանը: Գ.Սարգսյանը որակավորվեց որպես բարեխիղճ, պատասխանատու, լուրջ ու գիտակից անձնավորություն: Ֆրանսերեն լեզու և գրականություն չորրորդ կուրսի ուսանողուհի Մ.Մկրտչյանը նշեց, որ Գ.Սարգսյանն իր տեսակով ու տված գիտելիքով ուսանողներին դարձնում է ավելի ինքնավստահ, ինչի շնորհիվ նրանք կարողանում են ցույց տալ իրենց էմոցիաները և արտահայտել իրենց հուզող մտքերը: Հավելվեց նաև, որ նա կկարողանա հզորացնել ամբիոնը՝ ավելի ոգևորելով ուսանողներին: ՈՒԳԸ նախագահ Ֆարիդա Խաչատրյանը նշեց, որ Գ.Սարգսյանի կողմից ներկայացված ծրագիրը բազմաբովանդակ էր և հավելեց, որ ֆրանսիական բանասիրության ամբիոնը, ի դեմս Գ.Սարգսյանի, մեծ աջակցություն է ցուցաբերել ՈՒԳԸ-ի ծրագրերի իրականացման գործում ԵԼՀ ֆակուլտետի դեկան Բ.Գ.Թ., դոցենտ Գ.Բարսեղյանը անդրադարձավ գերմանական բանասիրության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Բ.Գ.Թ., դոցենտ Գ.Սավոյանին՝ նշելով, որ Գ.Սավոյանի ջանքերի շնորհիվ, բարոյահոգեբանական լավ մթնոլորտը ամբիոնում պահպանվել է: Նա լուրջ աշխատանք է տանում DAAD ծրագրի հետ: Իրականացվել է նաև MAJOREL կազմակերպության հետ լուրջ համագործակցություն, ինչի շնորհիվ ԵԼՀ ֆակուլտետը կունենա ինտերակտիվ, սպառազինված լսարան: Մ.Գ.Պ., պրոֆեսոր Ի.Կարապետյանը նշեց, որ հաճելիորեն զարմացած է, ներկայացված ծրագրից և հույս հայտնեց, որ բոլոր նախաձեռնություններն ու ռազմավարական կետերն ավարտին կհասցվեն: Թիվ 1 անգլերենի ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., պրոֆեսոր Մ.Ապրեսյանը նշեց, որ բավականին տպավորված է Գ.Սավոյանի կողմից ներկայացված ծրագրով: Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Հ.Բաղդասարյանը հույս հայտնեց, որ Գ.Սավոյանի իրականացվող աշխատանքը լավ արդյունքներ կունենա: Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ս.Գասպարյանը նշեց, որ տպավորիչ էր ներկայացված ծրագիրը և ընդդրկուն: Գովելի է նաև այն փաստը, որ այս տարի Գ.Սավոյանը տպագրեց իր մենագրությունը: Ֆրանսերեն լեզու և

գրականություն չորրորդ կուրսի ուսանողուհի Մ.Մկրտչյանը նշեց, որ Գ.Սավոյանը մեծ հարգանք է վայելում ուսանողների շրջանում: ՈւԳԸ նախագահ Ֆարիդա Խաչատրյանը նշեց, որ Գ.Սավոյանի գերմանական բանասիրության ամբիոնը, ի դեմս Գ.Սավոյանի, մեծ աջակցություն է ցուցաբերել ՈւԳԸ-ի ծրագրերի իրականացման գործում:

Գ.Բարսեղյանը խոսքը փոխանցեց մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Ա.Չուբարյանին, ով ներկայացնելով երկու թեկնածուների անձնական գործերը, նշեց, որ առկա են բոլոր փաստաթղթերը և երկու թեկնածուներին հաջողություն մաղթեց:

Կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ նախագահ՝ Հ.Բաղդասարյան, անդամներ՝ Մ.Ապրեսյան, Ֆ.Խաչատրյան: Քվեարկությանը մասնակցեցին գիտխորհրդի 36 անդամներից 30-ը, որի արդյունքում ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ ընտրվեց Գ.Սարգսյանը կողմ՝ 29, դեմ՝ 1, անվավեր՝ 0:

Գերմանական ամբիոնի վարիչ ընտրվեց Գ.Սավոյանը՝ կողմ՝ 30, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Ընթացիկ հարցեր:

Միաձայն թվեարկության արդյունքում որոշեցին՝

- Քվեարկության կողմ 29, դեմ 1, անվավեր 0 արդյունքների հիման վրա միջնորդել ԵՊՀ գիտխորհրդին հաստատել ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը Գայանե Սարգսյանին՝ ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու վերաբերյալ:
- Քվեարկության կողմ 30, դեմ 0, անվավեր 0 արդյունքների հիման վրա միջնորդել ԵՊՀ գիտխորհրդին հաստատել ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը Գայանե Սավոյանին՝ գերմանական բանասիրության ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու վերաբերյալ:
- Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտներ Լ. Կարապետյանի, Ն. Մարտիրոսյանի, դոցենտ Գ. Հարությունյանի և Ս. Խանդանյանի “Upgrade Your Proficiency in English” դասագիրքը երաշխավորել տպագրության:
- Հաստատել արտասահմանյան գրականության ամբիոնի առկա ասպիրանտ Մարիամ Գուրգենի Մարտիրոսյանի թեկնածուական ատենախոսությունը «20-րդ դարի 2-րդ կեսի գերմանական պատմվածքը» վերնագրով, Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արա Հրաչիկի Առաքելյանին:
- Հաստատել ֆրանսիական բանասիրության ամբիոնի կողմից ներկայացված «Գործարարություն և միջազգային բանակցություն» մագիստրատուրայի նոր կրթական ծրագիրը:
- Ֆրանսիական բանասիրության ամբիոնի բ.գ.թ. ասիստենտ Շ. Թամրազյանի հեղինակած «Les visages de l'art dans la littérature française du XVII-XXI.

L'expérience artistique et « la recherche de l'absolu », (Արվեստի կերպավորումները XVII-XXI դարի ֆրանսիական գրականության մեջ. արվեստագետի փորձը և «բացարձակի որոնումը») գիտամեթոդական ուղեցույցը երաշխավորել հրատարակության:

- Ատեստավորել Տաթևիկ Եղիազարյանին ռոմանական բանասիրության ամբիոնում որպես հեռակա ասպիրանտ :
- Երաշխավորել Ա.Մարտիրոսյանի, Վ.Միրզոյանի «Շուկայավարման մշակութաբանություն» ուսումնական ձեռնարկը տպագրության: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Հաստատել գերմանական բանասիրության ամբիոնի դասախոսներ Գ.Մելտոնյանի, Ք.Սողոմոնյանի, Ն.Դիվանյանի կազմած «Deutsch. Ein Lehrwerk für Jugendliche und Erwachsene» / «Գերմաներենը երիտասարդների և մեծահասակների համար»/ դասագրքի առաջարկված նոր վերնագիրը՝ վերանվանելով այն «Deutsch (für Stufen A2-B1)» / «Գերմաներենը A2-B1 մակարդակների համար»/:

ԵԼՀ ֆակուլտետի

ղեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝

06.07.2022թ



Գ.Բարսեղյան



Մ.Դավայան